

**3. Մրցույթում գրագողության տարրեր պարունակող գիտական աշխատություններին միավորներ հատկացնելու վերաբերյալ դժգոհություններ:** Այս դեպքում անհրաժեշտ ենք գտնում նշել, որ, նախ այդ աշխատությունների գիտական լինելու փաստը հավաստվել և ստորագրվել է գիտական կազմակերպության կամ բուհի ղեկավարության կողմից, և երկրորդ՝ տպագրվելուց առաջ դրանք ստացել են տվյալ կազմակերպության գիտական խորհրդի և նաև առանձին գիտաշխատողների երաշխավորությունները, ովքեր կոչված են հաստատելու գիտական արդյունքի առկայությունը և նորույթը երաշխավորվող աշխատանքում: Հետևաբար, եթե անհատ գիտաշխատողները, գիտական կազմակերպության մասնագիտական կառույցներն ու ղեկավարությունը գրագողության տարրեր պարունակող աշխատանքը հաստատում են որպես գիտական աշխատություն, ապա կոմիտեն այս մրցույթի շրջանակներում իրավասություն չունի դրանք չգնահատել՝ օգտագործելով միայն ֆորմալիզացված չափանիշները: Հարցի լուծումն ու պատասխանատվությունն այս դեպքում ամբողջապես գտնվում է աշխատությունների հեղինակների, դրանք հրատարակման երաշխավորող անհատ գիտաշխատողների և գիտական խորհուրդների, ինչպես նաև այդ աշխատությունները գիտական կոչելու փաստը հավաստող ու հաստատող կազմակերպությունների ղեկավարության դաշտում՝ որոշումներ ընդունելիս ֆորմալ մոտեցումը պետք է փոխարինվի բովանդակայինով: **Այնուհանդերձ, կոմիտեն, լինելով գիտության ոլորտում պետական քաղաքականության պատասխանատուն և գիտության անադարտության կողմնակից, հայտարարում է իր պատրաստակամությունը քննարկել գրագողության վերաբերյալ դիմումները, նյութերը և կազմակերպել լրացուցիչ քննություն՝ համապատասխան հետևանքներով. գրագողության տարրեր պարունակող աշխատությունները չպետք է գնահատվեն որպես գիտական արդյունք: Կոչ ենք անում համապատասխան տեղեկատվության առկայության դեպքում այն ներկայացնել Գիտության կոմիտե:**